

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/1**

**26 ապրիլի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանի 07.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 04.04.2014 թ-ի թիվ 254 որոշման դեմ:

**Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանը հաշվառված է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ում և հանդիսանում է շրջանառության հարկ վճարող:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի տարածքային հարկային տեսչությունը 25.11.2013 թ-ին կազմել է թիվ 1108512 ստուգման ակտը, որով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով առաջադրվել է վճարման տուգանք՝ գումարով 300.000 դրամի չափով:

Նշված ակտի դեմ Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում: ՀՀ վարչական դատարանի 11.12.2013 թ-ի որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ: Ներկայումս գործի քննությունը շարունակվում է:

Չնայած նրան, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ի 25.11.2013 թ-ի թիվ 1108512 ստուգման ակտը Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանի կողմից վիճարկվել է և գործի քննությունը շարունակվում է, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ի պետի կողմից 04.04.2014 թ-ին կայացվել է թիվ 254 որոշումը հիշյալ ակտի հիման վրա առաջադրված գումարը ԴԱՀԿ ծառայության միջոցով գանձելու համար:

Քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ի 25.11.2013 թ-ի թիվ 1108512 վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, հետևաբար վերը նշված ակտի հիման վրա գումար գանձելու վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ի պետի 04.04.2014 թ-ին կայացված թիվ 254 որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ, Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածների պահանջների խախտումներով:

Ելնելով վերոգրյալից գանգատաբերը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 04.04.2014 թ-ի թիվ 254 որոշումը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որով խնդրվել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 25.11.2013 թ-ի թիվ 1108512 ստուգման ակտը

(այսուհետ նաև ստուգման ակտ): ՀՀ վարչական դատարանը 11.12.2013 թ-ին կայացրել է թիվ ՎԴ/11697/05/13 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանի հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Այնուհետև, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի կողմից 04.04.2014 թ-ին ընդունվել է թիվ 254 որոշումը՝ ժամանակին չվճարված պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը, որը 31.03.2014 թ-ի դրությամբ կազմում է 585.900 դրամ, գանձելու մասին: Ընդ որում, 04.04.2014 թ-ի թիվ 254 որոշմամբ գանձման ենթակա գումարն իր մեջ ներառում է ստուգման ակտով առաջադրված պարտավորությունները:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Իր հերթին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 04.04.2014 թ-ի թիվ 254 որոշմամբ գանձման առաջադրված գումարը ներառում է ստուգման ակտով առաջադրված պարտավորությունը, որի իրավաչափության հարցը քննարկվում է դատական կարգով, ինչպես նաև ղեկավարվելով վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ 04.04.2014 թ-ի թիվ 254 որոշման կատարմանն ուղղված գործողություններից՝ մինչև ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/11697/05/13 գործով գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի ընդունումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

1. Ա/Ձ Գագիկ Չիլինգարյանի 07.04.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ-ին ձեռնպահ մնալ 04.04.2014 թ-ի թիվ 254 որոշման կատարմանն ուղղված գործողություններից՝ մինչև ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/11697/05/13 գործով գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի ընդունումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ